ՀՀ Արագածոտնի մարզպետ Աշոտ Սիմոնյանի շնորհավորական ուղերձը ՀՀ Անկախության օրվա առթիվ

Սիրելի՛ հայրենակիցներ, շնորհավորում եմ Հայաստանի Հանրապետության Անկախության տոնի առթիվ:

1991 թվականի սեպտեմբերի 21-ին հանրաքվեի միջոցով հայ ժողովուրդը միակամ ընտրեց անկախություն ուղին: Այդ իրողությունը պատմական ու ճակատագրական էր ոչ միայն Հայաստանի տարածքում բնակվողների, այլեւ նրա սահմաններից դուրս գտնվող աշխարհասփյուռ հայերի համար: Գրեթե միաձայն ընդունած «այո»-ն նոր ճանապարհի սկիզբն էր, որը նաեւ մեր պապերի վաղեմի երազանքների իրականացման հաստատումն էր:

Անցյալի պատմությունը ունենալով մեր գիտակցության մեջ, հավատով ու վստահությամբ շարժվեցինք առաջ՝ շարունակելով կերտել մեր նորագույն պատմությունը, Հայաստանի երրորդ հանրապետության պատմությունը:

Սիրելի՛ հայրենակիցներ, 26 տարի է մենք ապրում ենք ինքնիշխան պետականություն ունեցող մեր անկախ երկրում: Այդ ընթացքում համայն հայության միախմբված ուժն ու անձնազոհ նվիրումը տեսանելի ու շոշափելի են եղել ամենուր՝ թե՛ քաղաքական, սոցիալ-տնտեսական ասպարեզում, եւ թե՛ ռազմաճակատում ու խաղաղության կերտման ճանապարհին:

Համահայկական միասնականությամբ ու հավաքականության ուժի անվերապահ գիտակցմամբ Հայաստանի Հանրապետությունն ապահովել է իր արժանապատիվ եւ հաստատակամ ընթացքը միջազգային աշխարհա-քաղաքական դաշտում, ինչը մեր անընդհատ շարունակականության երաշխիքն է:

Վերստին շնորհավորում եմ բոլորիս Անկախության տոնի առթիվ, մաղթում եմ խաղաղություն, բարեկեցություն, ամենայն բարիք: